ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ

04.10.2023թ. ժ. 16:00 Էկոնոմիկայի նախարարության կոլեգիայի դահլիճ

Խորհրդի անդամներ

1.	Վարդան Ուռուտյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
2.	Արամ Խաչատրյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ
3.	Գուրգեն Գրիգորյան	«Կառուցապատողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
4.	Արա Խզմալյան	Բիզնես և իրավաբանական խորհրդատվության ընկերություն
5.	Հայկազ Ֆանյան	«Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ
6.	Էլինա Մարգարյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
7.	Էդիտա Ղազարյան	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» (ԱՏՁՄ) հասարակական կազմակերպություն
8.	Գրիգոր Բաբայան	«Նաիրի տեք» ՍՊԸ տնօրեն (ԱՏՁՄ)

9.	Ինգա Հարությունյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
10.	Արտակ Մելիքսեթյան	«Վոլո» ՍՊԸ (ԱՏՁՄ)
11.	Կարեն Զաքարյան	«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

Հրավիրված անձինք

12.	Լուսինե Սարգսյան	Բրիտանական դեսպանատուն Երևանում
13.	Լեռնիկ Հարությունյան	ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ
14.	Արման Մնացականյան	ՊԵԿ իրավաբանական վարչության պետ
15.	Արտակ Մանուկյան	Կենտրոնական բանկի խորհրդի անդամ
16.	Ավագ Ավանեսյան	Ֆինանսների նախարարի տեղակալ
17.	Օրի Ալավերդյան	Ֆինանսների նախարարության Եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ
18.	Լևոն Խաչատրյան	Արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության ներկայացուցիչ

Քարտուղարության անդամներ

19.	Հովսեփ Պատվականյան	ՎՋԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ղեկավար
20.	Հայկ Մալխասյան	ՎՋԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու
21.	Դավիթ Աղաջանյան	ՎՋԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ
22.	Ռուբեն Սարուխանյան	ՎՋԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի տնտեսագետ, տնտեսագետ
23.	Վիկտորիա Կամարյան	ՎՋԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի համակարգող
24.	Հասմիկ Տոնապետյան	ՎՋԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի հանրային կապերի պատասխանատու

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1. Գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի կնքման համար իրավակարգավորումների ներդրում («ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ),

Հարց 2. Բանկային գաղտնիքին վերաբերող կարգավորումների նախագծի վերաբերյալ:

Հարց 3. Համալիր հարկային ստուգումների տարեկան ծրագրի չհրապարակման, հարկային հաշվարկների ճշգրտման սահմանափակումների, հարկային պարտավորությունների առաջադրման ժամկետների նախագծի վերաբերյալ:

Նիստի բացմանը նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը առաջարկեց մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը՝ քննարկել Լեռնային Ղարաբաղի հետ կապված գործընթացների պատճառով ստեղծված իրավիճակը, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների հետ կապված հրատապ խնդիրների լուծմանն ուղղված Կառավարության նախագծերը և գործողությունները, որից հետո ենթախորհրդի անդամները ևս կարող են ներկայացնել դրանց կամ իրենց կողմից առաջարկվող նախաձեռնությունների վերաբերյալ առաջարկություններ կամ արձանագրված այլ խնդիրներ, դրանց կարգավորման հրատապությունը և այլն: Պարոն Գևորգյանը մատնանշեց, որ դրանք քարտեզագրվելուց հետո կմշակվեն նախագծեր, որոնք հրատապության ռեժիմով կքննարկվեն և կներկայացվեն կառավարության դիտարկմանը:

Նախարարի տեղակալը տեղեկացրեց, որ Կառավարության քայլերն ուղղված են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի առաջնային խնդիրների բացահայտմանը, քարտեզագրմանը և հասցեական օժանդակության մեխանիզմների մշակմանը: Այստեղ բավականին կարևոր է համապարփակ կարիքների գնահատման աշխատանքների պատշաճ իրականացումը, ինչը թույլ կտա մշակել հասցեական կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ աջակցության ծրագրեր: Պարոն Գևորգյանը նշեց, որ կարճաժամկետ ծրագրերը, բնականաբար, վերաբերում են առաջնային խնդիրների լուծմանը առնչվող գործողությունների խմբին, այն է՝ բռնի տեղահանվածների կեցավայրերով և զբաղվածությամբ ապահովմանը, գրանցման, հաշվառման սոցիալ-հոգեբանական, կրթական, առողջապահական, սոցիալական և այլ պահանջվող ծառայությունների մատուցմանը:

Տեղահանվածներին ընդունելու, գրանցելու, կեցավայրերով ապահովման խնդիրները լուծվում են վերջիններիս՝ Հայաստանում մարզային բաշխման ապահովման միջոցով, որն

իրականացվել է Կոռնիձորում և Գորիսում գործող կամավորական ջոկատների միջոցով: Այս օժանդակությունից արդեն իսկ օգտվել են զգալի քանակությամբ տեղահանվածներ:

Դեմոգրաֆիական առումով մոտ 100 հազար տեղահանված է եկել Հայաստան, դրանց մոտ 30 հազարը երեխաներ են, 15-ից 20 հազարը տարեցներ են: Մնացած 50 հազարի համար պետք է մշակվեն զբաղվածության և գործունեության ապահովման միջնաժամկետ ծրագրեր:

Վերջիններս ևս տարանջատվում են մի քանի խմբերի, որոնց մի մասի համար զբաղվածությունը կապահովի պետական հատվածի կարիքների բավարարման հաշվին՝ օրինակ՝ պաշտպանության ոլորտում ծառայողների, պետական մարմինների աշխատակիցների համար համարժեք զբաղվածության ապահովմամբ:

Մյուս մասի զբաղվածության ապահովման հարցերի կարգավորումը Էկոնոմիկայի նախարարությունը նախատեսում է իրականացնել ենթախորհրդի շրջանակում մշակված ծրագրերի ներքո, մասնավորապես՝ ծրագրերից մեկը մշակող արդյունաբերության ոլորտում աշխատողների ներգրավման միջոցառումն է, որը շրջանառվել է և ս.թ. սեպտեմբերի 12-ին քննարկվել է նաև սոցիալական նախարարական կոմիտեի նիստում: Նախորդ շաբաթ այն պետք է մտներ Կառավարության նիստի օրակարգ, սակայն իրավիճակով պայմանավորված՝ վերջինիս վերաբերյալ առաջարկվել է կատարել որոշ փոփոխություններ, մասնավորապես՝ որակավորման պահանջների հետ կապված, որպեսզի ծրագիրը կիրառելի լինի Լեռնային Ղարաբաղի մշակող արդյունաբերության ոլորտի մասնագետների ներգրավման դեպքում: Առաջարկի ձևակերպմամբ փոփոխված նախագիծը արդեն իսկ ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ՝ սոցիալական նախարարական կոմիտեի նիստին քննարկելու նպատակով: Նշվածի մասով արդյունավետությունն ապահովելու համար պետք է հավաքագրվի տվյալների բազա՝ կապված տեղահանված այն մարդկանց վերաբերյալ, ովքեր Լեռնային Ղարաբաղում աշխատել են մշակող արդյունաբերության ոլորտում:

Երկրորդ ծրագիրը, որի շրջանակում նախատեսվում է աջակցություն տրամադրել Լեռնային Ղարաբաղի նախկինում գործող և ներկայումս տեղահանված կազմակերպություններին՝ Արդիականացման ծրագիրն է: Ծրագրի փոփոխությամբ հնարավորություն է ընձեռնվում այն կազմակերպություններին, որոնք կցանկանան ՀՀ-ում հիմնել բիզնես, օգտվել միջոցառման շրջանակում աջակցության գործիքակազմից, ընդ որում՝ համալրված մի շարք այնպիսի

ուղղություններով, ինչպիսիք են՝ հումքի գնում կամ ներմուծում, պետական կամ համայնքի բյուջե հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների վճարումներ, տնտեսավարողի աշխատակիցներին աշխատավարձ կամ դրան հավասարեցված վճարումներ, այլ վարկային պարտավորությունների վերաֆինանսավորում: Վերջիններիս համար նախատեսվում է նաև վարկի/լիզինգի մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատվածը երկարաձգել մինչև 24 ամիս սահմանում, իսկ սուբսիդավորման ժամկետը՝ մինչև 72 ամիս: Պարոն Գևորգյանը նշեց նաև, որ այստեղ կարևորվում է թիրախային կազմակերպություններին նույնականացնելու խնդիրը և այդ ուղղությամբ ևս պետք է աշխատանքներ տարվեն:

Երրորդ ծրագիրը, որի շրջանակներում նույնպես նախատեսվում են տեղահանված բնակչության տնտեսական գործունեություն իրականացնելու համար թիրախային օժանդակության գործիքներ՝ սկսնակներին ուղղված ծրագիրն է: Ծրագրի նախագծով սահմանված են նշված թիրախային խմբի բիզնես դասընթացների կազմակերպման վճարների և մշակված գործարար ծրագրերի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և լիցենզավորված ֆինանսական կազմակերպությունների կողմից արտոնյալ վարկերի տրամադրման մեխանիզմներ: Դիտարկվող վերջին երկու նախագծերն էլ ներկայումս գտնվում են Վարչապետի աշխատակազմ ներկայացման փուլում:

Այսպիսով, Էկոնոմիկայի նախարարությունը նշված երեք ուղղությամբ է նախատեսել աջակցության գործիքակազմը, ընդ որում՝ նախատեսվող բոլոր փոփոխությունները նախնական քննարկվել են Կառավարության հետ: Իհարկե, նշվածը չի ներկայացնում Կառավարության ողջ գործիքակազմը, որոնք ներառում են նաև մի քանի հիմնավոր ծրագրեր, այդ թվում նաև կառուցապատման և այլնի մասով: Այդ ուղղությամբ բոլոր գերատեսչություններն էլ տանում են ակտիվ աշխատանքներ:

Դիտարկվող խնդիրների շուրջ իրենց տեսակետներն ու առաջարկությունները հայտնեցին ենթախորհրդի անդամ կազմակերպությունների մի շարք ներկայացուցիչներ:

Մասնավորապես, Արտակ Մելիքսեթյանը, Ինգա Հարությունյանը, Հակոբ Ավագյանը: Պարոն Մելիքսեթյանը այս համատեքստում կարևորեց բարեգործական կազմակերպությունների համար հարկային արտոնություններ նախատեսող կարգավորումների ընդունումը, քանի որ դրանով մեծապես կխթանվի տեղահանվածների հետ կապված բարեգործական

կազմակերպությունների կողմից ներկայումս իրականացվող ծրագրերը: Դրա հետ կապված՝ Ռաֆայել Գևորգյանը տեղեկացրեց, որ նախարարության կողմից արդեն շրջանառվել է համապատասխան նախագիծ, որով առաջարկվում է հնարավորություն տալ շահութահարկ վճարողներին՝ իրենց համախառն եկամտի մինչև 2.5%-ի չափով հանրակրթական դպրոցներին, ԲՈՒՀ-երին և նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական կրթական հաստատություններին իրականացված նվիրատվությունները նվազեցնել շահութահարկով հարկման բազայից և նույն մոտեցումը առաջարկվել է կիրառել նաև Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին իրականացվող նվիրատվությունների մասով: Առաջարկվել է նաև հանրակրթական դպրոցներին, ԲՈՒՀ-երին և միջին մասնագիտական կրթական հաստատություններին իրականացված նվիրատվությունները ազատել ԱԱՀ-ից: Բացի այդ, պարոն Մելիքսեթյանը հայտնեց, որ համաձայն վերջինիս՝ Կառավարությունը պետք է առնվազն տարեկան 150 մլն քաղաքաշինական ծրագրեր իրականացնի, ընդհուպ՝ նոր քաղաքների, բնակության վայրերի կառուցմամբ:

Պարոն Հակոբ Ավագյանը, ներկայացրելով ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի կողմից կամավորական հիմունքներով արդեն իսկ կատարված մի քանի աշխատանքներ, հայտնեց իր դիտարկումները և որոշ մտահոգություններ՝ կապված առկա իրավիճակի և հնարավոր նմանատիպ իրավիճակների հանգամանքներում հնարավոր բացթողումների հետ:

Պարոն Ավագյանը՝ հանձինս ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի, հայտնեց նաև մյուս կազմակերպությունների պատրաստակամությունը՝ հնարավորինս աջակցել տեղահանվածների համար թե կացության, թե զբաղվածության, և թե տնտեսական միջոցառումների հետ կապված հարցերում՝ մատնանշելով, որ նշված հարցերում Կառավարության կողմից ակնկալվում է առավել սերտ համագործակցություն բիզնես ասոցիացիաների հետ: Բացի այդ, պարոն Ավագյանը հայտնեց իր դիտարկումները՝ տեղահանված տնտեսվարողների համար հարկային արտոնությունների տրամադրման վերաբերյալ: Նշվածի մասով Ռաֆայել Գևորգյանը ևս մեկ անգամ վերահաստատեց Կառավարության մոտեցումը առ այն, որ բիզնեսի զարգացմանը պետք է նպաստել նպատակային ծրագրերի իրականացման, այլ ոչ թե հարկային արտոնությունների տրամադրման ճանապարհով:

Ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանը, համակարծիք լինելով պարոն Գևորգյանի հետ, հավելեց, որ շատ կարևոր է խնդիրների արագ արձագանքման և կառուցվածքային լուծման գործոնի ապահովումը, քանի որ ներկայումս Հայաստանում գտնվող տեղահանվածների առաջնային խնդիրների, այդ թվում՝ զբաղվածության և տնտեսական գործունեության վերականգման հարցերի հետ կապված, հնարավորինս արագ չլուծելու հանգամանքում, նրանցից շատերը կլքեն Հայաստանը:

«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» ՀԿ–ի գործադիր տնօրեն Ինգա Հարությունյանը ևս համառոտ ներկայացրեց տեղեկատվություն՝ կազմակերպության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ, մասնավորապես կազմակերպության անդամ ընկերություններում տեղահանված բնակչության աշխատանքի տեղավորման, կացության հետ կապված խնդիրներում: Տիկին Հարությունյանը տեղեկացրեց, որ անհրաժեշտ է համարում, որ տնտեսական, սոցիալական և կառուցապատման բլոկները աշխատեն շատ սերտ փոխկապակցված՝ ոլորտային քաղաքականությունների գործուն համակցումը ապահովելու համար: Բացի այդ, տիկին Հարությունյանը ևս նշեց, որ շատ կարևոր է տեղահանվածների մասով տվյալների բազայի ստեղծումը, ինչը թույլ կտա գործատուներին հասկանալու, թե աշխատանքի ինչպիսի պահանջարկ է բավարարվելու: Դա չափազանց կարևոր է տեղեկատվության հոսքի և իրականացվող աշխատանքների բնականոն շղթան ապահովելու համար:

Արդեն իսկ քննարկված հարցերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացրեց ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային Խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանը՝ շեշտելով տեղահանված բնակչության դիտարկվող թիրախային խմբերի յուրաքանչյուր անձի նույնականացման անհրաժեշտությունը՝ ըստ ոլորտային գործունեության, աշխատած տարիների, ներկայիս բնակության և հաշվառման, կոնտակտային տվյալների և այլ անհրաժեշտ տեղեկատվության ամրագրմամբ:

Քննարկման արդյունքներով նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը արձանագրեց, որ մինչ իրավիճակի կարգավորումը՝ ՓՄՁ ենթախորհրդի հետագա նիստերի ընթացքում, օրակարգային հարցերի քննարկումից հետո, Էկոնոմիկայի նախարարությունը ամփոփ կներկայացնի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց աջակցության մասով նախաձեռնությունների ընթացքի հետ կապված տեղեկատվություն: Բացի այդ,

նախարարությունը հնարավորինս սեղմ ժամկետներում ՎԶԵԲ ՀՆԽ–ին և ՓՄՁ զարգացման ենթախորհրդի անդամներին ամփոփ տվյալներ կներկայացնի Լեռնային Ղարաբաղի մշակող արդյունաբերության ոլորտի տեղահանված աշխատակիցների վերաբերյալ՝ բիզնես ասոցիացիաների կողմից աշխատանքի տեղավորելու գործընթացներում աջակցություն տրամադրելու համար:

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային Խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանի զեկուցմամբ ներկայացվեց ՓՄՁ զարգացման ենթախորհրդի շրջանակներում ձևավորված նախագծերի ընթացքի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն: Մասնավորապես, նշվեց, որ առաջին ընթերցմամբ ԱԺ կողմից ընդունվել է հեռավար և համակցված հեռավար եղանակով աշխատանքի կանխատեսելի և ճկուն օրենսդրական կարգավորումների ներդրման նպատակով մշակված «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, երկրորդ ընթերցմամբ ընդունվել է ՍՊԸ–երի կողմից շահաբաժինների վճարման կարգավորումների պարզեցման նպատակով մշակված՝ ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը և այլն: Զեկույցից հետո պարոն Հովսեփյանը խոսքը փոխանցեց օրակարգային հարցեր զեկուցողներին:

Հարց 1. Գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի կնքման համար իրավակարգավորումների ներդրում («ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ);

«Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամի տնօրեն Հայկազ Ֆանյանի և ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու Հայկ Մալխասյանի համազեկուցմամբ ներկայացվեց հարցը: Համաձայն զեկուցողների՝ հանրային գնումներին հասանելիության ռիսկերը ներառում են ՓՄՁ սուբյեկտների առջև ծառացող ֆինանսական խոչընդոտները: Որպես կանոն՝ ՓՄՁ սուբյեկտները չեն ունենում այնքան

ազատ ֆինանսական միջոցներ կամ այլ կերպ այդ միջոցները ներգրավելու հնարավորություն, որ կարողանան մասնակցել առավել մեծ արժեքով գործարքների, որը թույլ կտար նրանց աճել:

Նշված խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է բարելավել ՓՄՁ-ների համար ֆինանսների հասանելիությունը: Որպես այդպիսի գործիք կարող է ծառայել ֆակտորինգը, որի կիրառությունը ներկայումս բավարար չէ: Բանկերի և պետական գնումներին մասնակցող տնտեսավարողների ներկայացուցիչների հետ քննարկումները ցույց են տվել, որ առկա են որոշ խոչընդոտներ, որոնց լուծումն էապես կարող է մեծացնել ֆակտորինգի կիրառության ծավալները. մասնավորապես, խոսքը գնում է ֆակտորինգի մասին օրենքով պահանջվող ծանուցումը ներկայացնելու ժամկետի և հասցեատիրոջ մասին, ինչպես նաև նման ծանուցման հիման վրա վճարումն անմիջապես ֆինանսական գործակալին կատարելու համար անհրաժեշտ կարգավորումների մասին:

Բացի այդ, ֆինանսական կազմակերպությունների կողմից տեղեկատվության ստացման կառուցակարգերի բացակայությունը դժվարացնում է նրանց կողմից վարկային ռիսկի ճիշտ գնահատումը և ևս մեկ խոչընդոտ է հանդիսանում ֆակտորինգի կիրառման համար:

Որպես վերոհիշյալ հարցերի լուծում՝ առաջարկվում է լրացումներ կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգում:

Առաջարկվող փոփոխությունների հետ կապված՝ Ֆինանսների նախարարության առարկությունների մասով պարզաբանումներ ներկայացրեց Ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանը: Համաձայն վերջինիս՝ առարկությունները կապված են ոչ այնքան բովանդակային մասի հետ, որքան առաջարկվող փոփոխությունների արդյունքում պետական գնումների գործընթացի տեխնիկական ապահովման մասով նախատեսվող խնդիրների:

Հարցի վերաբերյալ տեսակետներ հայտնեցին նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը, Կենտրոնական բանկի խորհրդի անդամ Արտակ Մանուկյանը և նիստի այլ մասնակիցներ:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՈՐՈՇՎԵՑ

Նախագծի հիմնավորումը լրամշակել և շրջանառել: Միաժամանակ, որոշվեց առաջիկա ժամանակահատվածում կազմակերպել հանդիպում Ֆինանսների նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանի հետ՝ Գանձապետարանի գործառույթային տեսանկյունից խնդիրը հասկանալու համար:

Հարց 2. Բանկային գաղտնիքին վերաբերող կարգավորումների նախագծի վերաբերյալ:

ՎՋԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու Հայկ Մալխասյանի զեկուցմամբ ներկայացվեց հարցը: Համաձայն նախագծի՝ առաջարկվում է Հարկային օրենսգրքում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնց արդյունքում հնարավոր կլինի առևտրային բանկերից հարկ վճարողների բանկային հաշիվների շարժի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, ինչպես նաև հարկային ստուգումների և ուսումնասիրությունների ընթացքում բանկային հաշիվների քաղվածքներ ստանալ:

Համաձայն ՓՄՁ ենթախորհրդի մասնավոր հատվածի անդամների կողմից ձևավորված դիրքորոշման՝ նախագծով ներկայացված չեն առաջարկվող փոփոխությունների ազդեցությունը գնահատող հաշվարկային հիմնավորումները (ՀՆԱ-ի և Հայաստանի ներդրումային գրավչության վրա ազդեցության տեսանկյունից), ինչպես նաև փոփոխությունների արդյունքում առաջիկա տարիների կանխատեսումները: Պարզ չէ նաև առաջարկվող փոփոխության կարգավորման հստակ նպատակն ու վերջինիս ընդունման անհրաժեշտությունը: Բացի այդ, նախագծով ՊԵԿ-ը հնարավորություն է ստանում ձեռք բերել բանկային գաղտնիք համարվող տեղեկատվություն՝ առանց դրա պատշաճ հիմնավորման, բացահայտելով և օգտագործելով անձի անհատական տվյալները, ինչը ընդունելի չի կարող համարվել Հայաստանի Հանրապետության անձնական տվյալների պաշտպանության և բանկային գաղտնիքի մասին օրենքների տրամաբանության տեսանկյունից:

Նախագծի վերաբերյալ իրենց դիտարկումները ներկայացրեցին պարոնայք Հայկազ Ֆանյանը, Կարեն Զաքարյանը, նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը և այլ անձինք, որոնց մասով որոշակի պարզաբանումներ ներկայացրեց ՊԵԿ իրավաբանական վարչության պետ

Արման Մնացականյանը՝ նշելով, որ նախագծի նպատակը ռիսկերի կառավարման համակարգին ինտեգրելու համար հարկ վճարողների բանկային հաշիվների շարժի վերաբերյալ ամփոփ տեղեկատվության տրամադրման, ինչպես հարկային ստուգումների և ուսումնասիրությունների ընթացքում հարկային մարմնին բանկային քաղվածքների տրամադրման գործընթացի կարգավորումն է:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՈՐՈՇՎԵՑ

Հաշվի առնելով, որ համաձայն նիստի մասնակիցների մեծ մասի տեսակետի, նախագծի հետ կապված ՊԵԿ ներկայացուցիչների պարզաբանումները բավարար չէին նախագծի անհրաժեշտության հիմնավորման համար, որոշվեց քննարկումը շարունակել ՊԵԿ–ում՝ առավել մանրամասն ենթախորհրդի մտահոգությունները ներկայացնելու համար: Որոշվեց նաև նախագծի մասով ենթախորհրդի անդամների առաջարկություններն ու առարկությունները էկոնոմիկայի նախարարության միջոցով փոխանցել ՊԵԿ–ին:

Հարց 3. Համալիր հարկային ստուգումների տարեկան ծրագրի չհրապարակման, հարկային հաշվարկների ճշգրտման սահմանափակումների, հարկային պարտավորությունների առաջադրման ժամկետների նախագծի վերաբերյալ:

Հաշվի առնելով քննարկված հարցերի բովանդակային ծավալը, որոշվեց հարցի քննարկումը հետաձգել՝ նախնականորեն այն ևս ՊԵԿ–ում քննարկելով:

ՓՄՁ զարգացման ենթախորհրդի նախագահ՝
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

X _____

_____
(ստորագրություն)

Արձանագրությունը կազմեց՝
ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊՄԵ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ